

Handwritten signature or initials in the top left corner.

Փետ. 20/81



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

## ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ՈՒՂԵՑՈՅՑ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդն ու Թեմական Խորհուրդը, Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի վաւերացումով, որոշած է որ առանձին թեմ մը հաստատուի Գանատայի մէջ՝ Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան ներքեւ:

Հետեւեալ քայլերը պիտի առնուին վերոյիշեալ որոշումի գործադրութեան համար.

1. Առաջնորդի կամ Առաջնորդի կողմէ նշանակուած Փոխանորդի նախագահութեամբ Խորհրդակցական ժողովի պիտի հրաւիրուին Գանատայի մեր եօթը համայնքներէն հետեւեալ ներկայացուցիչները.

- ա. Հոգեւոր Հովիւներ
- բ. Պատգամաւորներ --ներկայի--
- գ. Ժխական Խորհուրդներու Ատենապետները միայն
- դ. Այն համայնքները որոնք պատգամաւոր չունին, պիտի հրահանգուին ընտրելու մէկ անձ մը՝ որ ներկայացնէ իրենց համայնքը որպէս պատգամաւոր եւ մաս կազմէ Յանձնախումբին

### ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ատենապետ Հովիւ Պատգամաւոր Նշանակուելիք Գումար Պատգամաւոր

1. Մոնթրէալ	1	1	4	0	6
2. Թորոնթօ, Ս. Երրորդութիւն	1	1	4	0	6
3. Թորոնթօ, Ս. Խաչ	1	0	4	0	5
4. Սէյնթ Գէթրիինգ	1	1	1	0	3
5. Վանգուվըր	1	0	0	1	2
6. Հէմիլթըն	1	0	1	0	2
7. Օթաուա	1	0	0	1	2
	7	3	14	2	26

2. Այս Խորհրդակցական ժողովի անդամները պիտի գործեն հրահանգին համաձայն Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին: Նոյն ժողովին եւ անկէ ըխած յանձնախումբերուն որեւէ ու ըզոր աշխատանքները ենթակայ պիտի ըլլան վաւերացմանը Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին, որոնց որոշումները վերջնական պիտի նկատուին:
3. Խորհրդակցական ժողովին մէջ Առաջնորդը պիտի նշանակէ Առժամեայ Գործադիր Մարմին մը, որ պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն. 1. Առաջնորդի ներկայացուցիչ հոգեւորական մը իբրեւ նախագահ Առժամեայ Գործադիր Մարմինի. 2. Երկու հոգեւորական հայրեր. 3. Եօթը համայնքներէն մէկական ներկայացուցիչներ: Իւրաքանչիւր համայնքի ներկայացուցիչները կ'որոշեն թէ ով պիտի ծառայէ Առժամեայ Գործադիր Մարմինի իբրեւ անդամ: Իսկ երկու հոգեւորականները կը նշանակուին Առաջնորդին կողմէ:
4. Առժամեայ Գործադիր Մարմինը պիտի ընտրէ հետեւեալ պաշտօնեաները.
  - ա. Ատենապետ
  - բ. Փոխ Ատենապետ
  - գ. Ատենադպիր
  - դ. Գանձապահ
5. Թեմական Խորհուրդը Խորհրդակցական ժողովին պիտի ներկայացնէ նախագիծը Գանատայի յատուկ Կանոնադրութեան՝ վերատեսութեան, սրբազրութեան եւ բարեփոխութեան համար:
6. Խորհրդակցական ժողովը օրինակոր նիստի մէջ, որ հրաւիրուած պէտք է ըլլայ Առժամեայ Գործադիր Մարմինի նախագահին, Ատենապետին եւ Ատենադպրին ստորագրութեամբ, կը վերանկատէ Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի ներկայացուցած Գանատայի յատուկ Կանոնադրութիւնը յօդուած առ յօդուած, եւ մեծամասնութեան քուէարկութեամբ զայն վաւերացնելէ յետոյ, Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին կը վերադարձնէ սրբազրեալ Կանոնադրութիւնը:

Նոյն ժողովին մէջ Առժամեայ Գործադիր Մարմինին իրաւունք կը տրուի Գանատայի Հայց. Եկեղեցւոյ թեմը պաշտօնապէս արձանագրելու, ինչորփորէ՞ ընելու, Կառավարութեան մօտ:
7. Թեմական Խորհուրդը վերատեսութեան պիտի ենթարկէ սրբազրուած Կանոնադրութիւնը եւ իր յանձնարարութիւններով պիտի ներկայացնէ զայն վեհափառ Հայրապետին՝ ի վաւերացումն:
8. Առաջնորդ եւ Թեմական Խորհուրդ վեհափառ Հայրապետէն ստանալէ յետոյ նորին Սրբութեան ստորագրութեամբ եւ կնիքով վաւերացեալ Գանատայի թեմի նոր Կանոնադրութիւնը, հրահանգ պիտի դրկէ Գանատայի թեմի եօթը համայնքներուն Մասնաւոր Անդամական ժողով գումարելու, եւ նոր Կանոնադրութեան համաձայն ընտրելու նոր Թեմական Պատգամաւորներ եւ ծխական Խորհուրդի անդամներ:
9. Առաջնորդ եւ Թեմական Խորհուրդ վաւերացնելէ յետոյ Մասնաւոր Անդամական ժողովներու կառարած ընտրութիւնները, պիտի ծշդեն թուականը, վայրը եւ օրակարգը գումարուելիք առաջին Թեմական Պատգամաւորական ժողովին: Եւ

Առաջնորդին ստորագրութեամբ հրաւերներ կը դրկուին Գանատայի թեմի առաջին թեմական Պատգամաւորական Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող անձերուն:

10. Գանատայի թեմին առաջին թեմական Պատգամաւորական Ժողովին գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլայ ընտրել առաջին թեմական Խորհուրդը, թեմակալ Առաջնորդը, եւ այլ Յանձնախումբեր՝ ըստ վաւերացեալ Կանոնադրութեան տրամադրութեանց: Առաջին թեմական Պատգամաւորական Ժողովը պիտի լիարժեք թեմական խորհուրդի անդամները հետեւեալ կերպով ընտրէ իրեն «Գործօրէյշըն» ընկերակցութեան անդամները: Իրեն արձանագրութեամբ Գանատայի Հայոց Եկեղեցւոյ Կանոնադրութեան Երկրորդ Գլխաւոր Կէտքով ընտրուած թեմական Խորհուրդը պիտի ընտրուի թեմական Խորհուրդի անդամները եւ ընտրութեանց արդիւնքը, Առաջնորդ Սրբազան կը դրկէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որուն վաւերացումը ստանալէ յետոյ, եթէ նորընտիր Առաջնորդն ալ ներկայ է, պաշտօնապէս փոխանցումը կը կատարէ նորընտիր Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին:

11. Գանատայի թեմի առաջին թեմական Պատգամաւորական Ժողովին արձանագրութիւնները եւ ընտրութեանց արդիւնքը, Առաջնորդ Սրբազան կը դրկէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որուն վաւերացումը ստանալէ յետոյ, եթէ նորընտիր Առաջնորդն ալ ներկայ է, պաշտօնապէս փոխանցումը կը կատարէ նորընտիր Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին:

12. Գանատայի առանձին թեմի հաստատումը կարգապահութեամբ ապահովելու համար անհրաժեշտ են հետեւեալ պայմաններու զործադրութիւնը.

- ա. Գանատայի կառավարութեան կողմէ պաշտօնական ծանաչումը Գանատայի թեմին, իշխանութեանը ներքեւ Ամենայն Հայոց Հայրապետ նորին Ս. Օժոնթիւն Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի՝ յէջմիածին
- բ. Գանատայի համայնքներէն իւրաքանչիւրը իր նիւթական պարտաւորութեանց ամբողջական վճարումը կատարած պէտք է ըլլայ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանին, իրաւունք ունենալու համար իր ներկայացուցիչները դրկելու եւ մասնակցելու Գանատայի թեմի Խորհրդակցական Ժողովին եւ թեմական Պատգամաւորական Ժողովին: